

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**



**Կ Ա Ր Գ**

**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ**

**ԵՐԵՎԱՆ-2020**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ  
ԱՐՁ. No 6, ԿԱՅԱՅԱԾ 20.11.2020 Թ.  
ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝  
\_\_\_\_\_ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ  
ԿԱՐԳ**

**1 . ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Սույն կարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:
- 1.2. Մագիստրոսի կրթական ծրագրի մագիստրանտների մասնագիտական պրակտիկայի (այսուհետ՝ պրակտիկա) կազմակերպման և անցկացման կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Ակադեմիայի մագիստրոսի կրթական ծրագրի պրակտիկայի կազմակերպման և իրականացման նպատակները, խնդիրները, գործընթացի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, ամփոփման և գնահատման կարգը, պրակտիկայից սպասվելիք արդյունքները և այլն:
- 1.3. Պրակտիկան մագիստրոսական կրթության ծրագրերի պարտադիր բաղադրամասերից է, այն նպատակաուղղված է աջակցելու մագիստրանտների՝ ստացած տեսական գիտելիքներն ամրապնդելու և ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու համար անհրաժեշտ ունակություններ ձեռքբերելու գործին:

- 1.4. Սույն Կարգը կարող է լրացվել կամ փոփոխվել Ակադեմիայի գիտական խորհրդի որոշմամբ:

## **2. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

2.1. ***Պրակտիկայի նպատակներն են՝*** մասնագիտական գիտելիքների ընդլայնումը, համակարգումը և ամրագրումը, մագիստրանտների մոտ ինքնուրույն գիտական աշխատանք, հետազոտություններ, տեսական վերլուծություն և փորձարկումներ կատարելու կարողությունների ձևավորումը:

### **2.2. *Պրակտիկայի հիմնական խնդիրներն են՝***

- մագիստրանտների կողմից մասնագիտական փորձի ձեռքբերումը՝ արդիական գիտական հիմնախնդիրների ուսումնասիրման բնագավառում կոլեկտիվ գիտական ու հետազոտական աշխատանք կատարելու համար,
- մագիստրանտների մասնագիտական հմտությունների ձևավորում,
- ստացած գիտելիքների հիման վրա աշխատանքային կարողությունների ձևավորում,
- մագիստրանտների ծանոթությունը գիտական հետազոտությունների անցկացման մեթոդներին, գիտական աշխատանքի կատարման տարբեր փուլերին, գիտական որոնման տարբեր մեթոդներին, ինչպես նաև աշխատանքի արդյունքում ստացված տվյալների վերլուծության և համակարգման, մագիստրոսական թեզի համար դրանց օգտագործում,

- տարբեր գիտական խմբերի և հետազոտողների հետ համագործակցելու ունակությունների ձեռքբերում,
- մասնագիտական գործունեության նկատմամբ հետաքրքրության խթանում,
- հաստատությունների վերաբերյալ ընդհանուր տեղեկության ստացում,
- հաստատության կառուցվածքին ու աշխատանքներին ծանոթացում,
- մագիստրանտի անձնային և մասնագիտական որակների զարգացում,
- մասնագիտական գործունեություն իրականացնելու պատասխանատվության աստիճանի բացահայտում,
- մասնագիտական խնդիրների ստեղծագործական մոտեցման ձևավորում,
- մասնագիտական վարվելաձևի առանձնահատկությունների յուրացում:

### ***2.3. Պրակտիկայի ընթացքում մագիստրանտը պետք է ուսումնասիրի՝***

- մագիստրոսական թեզի թեմային վերաբերող գրական և պատենտային աղբյուրները՝ մագիստրոսական թեզի որակավորման աշխատանքում օգտագործելու համար,
- հետազոտական աշխատանքների իրականացման մեթոդները և ձևերը,
- հետազոտությունների համար օգտագործվող սարքավորումների շահագործման կանոնները,
- փորձարարական տվյալների մշակման և անալիզի մեթոդ-

ները,

- գիտական հետազոտություններում օգտագործվող տեղեկատվական տեխնոլոգիաները,
- գիտական և գիտատեխնիկական նյութերի ձևակերպմանը ներկայացվող պահանջները:

#### **2.4. Պրակտիկայի ընթացքում մագիստրանսը պետք է կատարի՝**

- գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության վերլուծություն, համակարգում և ամփոփում հետազոտության թեմայով,
- տեսական կամ փորձարարական հետազոտություն թեզի թեմայով,
- ստացված արդյունքների հավաստիության վերլուծություն,
- կատարված հետազոտությունների գիտական կամ գործնական նշանակության վերլուծություն:

### **3. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

- 3.1.** Պրակտիկան (մասնագիտական և հետազոտական) ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մասն է, և տեսական ուսուցումը պրակտիկ գործունեության հետ փոխկապակցելու անհրաժեշտ միջոցը:
- 3.2.** Պրակտիկայի տևողությունը կազմում է 8 շաբաթ՝ համաձայն մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական պլանների:

- 3.3.** Պրակտիկան կարող է անցկացվել մագիստրոսական ուսուցման ծրագրերն իրականացնող համապատասխան մասնագիտական ամբիոններում, ինչպես նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումներում, պետական, հասարակական, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, հիմնարկ-ձեռնարկություններում, որտեղ հնարավոր է մագիստրոսական թեզի կատարման համար անհրաժեշտ նյութերի ուսումնասիրությունը և հավաքումը:
- 3.4.** Պրակտիկան սկսվելուց առաջ կազմակերպվում է մեթոդական խորհրդատվություն մագիստրանտների և պրակտիկայի պատասխանատուների մասնակցությամբ, պարզաբանելու պրակտիկայի նպատակները, խնդիրները, նրա անցկացման ժամկետները, ինչպես նաև ծանոթացնելու օրագրերի լրացման կարգին, նրանց իրավունքներին և պարտականություններին:
- 3.5.** Պրակտիկայի անցկացման նպատակով բոլոր մագիստրանտների համար նշանակվում են ղեկավարներ՝ ամբիոններից և պրակտիկայի անցկացման վայրից:
- 3.6.** Պրակտիկայի ընթացքում մագիստրանտի գործունեությունը պետք է համապատասխանի մագիստրանտի գիտահետազոտական աշխատանքի թեմայի նպատակներին և խնդիրներին:
- 3.7.** Պրակտիկայի ընթացքում մագիստրանտները պետք է ենթարկվեն պրակտիկայի անցկացման վայրի ներքին

կարգապահական և անվտանգության տեխնիկայի կանոններին:

#### **4. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

- 4.1.** Պրակտիկան իրականացվում է մագիստրոսական թեզի հաստատված թեմայի շրջանակներում՝ հաշվի առնելով պրակտիկայի անցկացման վայրի հնարավորությունները:
- 4.2.** Պրակտիկայի բովանդակությունը որոշվում է մագիստրոսական ծրագրերի ղեկավարների կողմից՝ բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչների հիման վրա և արտահայտվում պրակտիկայի անհատական ծրագրում:
- 4.3.** Պրակտիկայի ընթացքում մագիստրանտների աշխատանքը կազմակերպվում է համաձայն մագիստրոսական թեզի ուղղությամբ պլանավորված աշխատանքի,
- հետազոտության նպատակների և խնդիրների ձևակերպում,
  - տվյալ խնդրին վերաբերող գրական նյութերի ուսումնասիրություն և վերլուծություն,
  - անհրաժեշտ նյութերի ընտրություն և համակարգում (պատենտային գրականություն, մասնագիտական գրականություն, կատարված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվություններ և այլն),
  - հետազոտության անցկացման մեթոդների որոշում, աշխատանքի պլանավորում,



- պլանով նախատեսած աշխատանքների իրականացում,
- ստացված փորձարարական տվյալների վերլուծություն,
- հետազոտության արդյունքների վերլուծություն և ամփոփում:

## 5. ՄԱԳԻՍՏՐԱՆՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐՈՒՄ

- 5.1. Մագիստրանտի գործունեությունը պրակտիկայի անցկացման վայրում բաղկացած է հետևյալ փուլերից.
- 1) հետազոտության անցկացման աշխատանքային պլանի և գրաֆիկի կազմում ղեկավարի մասնակցությամբ (**Հավելված 1, Հավելված 2**):
  - 2) կոնկրետ խնդիրների և նպատակների ձևակերպում, օտարերկրյա և հայրենական գրականության մեջ տվյալ թեմային վերաբերող գրական տվյալների հավաքագրում (աշխատանք գրադարանում, նյութերի որոնում ինտերնետային ռեսուրսներում և այլն), ամփոփում, վերլուծություն, փորձարարական աշխատանքների կատարում, տվյալների ամփոփում ու վերլուծություն և այլն:
  - 3) իրականացված հետազոտության արդյունքների ամփոփում, ձևակերպում և համաձայնեցում՝ մագիստրոսական թեզի ղեկավարի հետ:
- 5.2. ***Մագիստրանտը պրակտիկայի ընթացքում պարտավոր է՝***

- 5.2.1. Կատարել պրակտիկայի ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքները:
- 5.2.2. Ենթարկվել պրակտիկան իրականացնող ստորաբաժանման աշխատանքային ներքին կանոնակարգին:
- 5.2.3. Նախատեսվող պրակտիկայի օրագրում կատարել կարճ գրառումներ, պրակտիկայի անցկացման ընթացքի վերաբերյալ, յուրաքանչյուր գրառում ամրագրվում է համապատասխան ամսաթվով, գրառումների հերթականությունը հաստատվում է տվյալ ստորաբաժանման պրակտիկայի ղեկավարի ստորագրությամբ:
- 5.2.4. Պրակտիկայի ավարտից հետո օրագիրը ներկայացնել համապատասխան մասնագիտական ամբիոն:
- 5.3. ***Պրակտիկանյւ մագիստրանյւի իրավունքներն են՝***
- 5.3.1. Ծանոթանալ իր գործունեությանը վերաբերող ղեկավարության որոշումներին:
- 5.3.2. Ծանոթանալ պրակտիկայի ընթացքում ստորաբաժանման աշխատանքային պլաններին, պայմաններին ու հնարավորություններին:
- 5.3.3. Աշխատանքն անբավարար գնահատվելու դեպքում մագիստրանտը կարող է այն բողոքարկել, ըստ գործող գնահատման կարգի:

## **6. ՊՐԱԿՏԻԿԱՅԻՑ ՍՊԱՍՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

- 6.1. Գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանության

հիմնական դրույթների իմացություն, մագիստրոսական թեզի թեմայով աշխատանքներում դրանք կիրառելու կարողություն,

- 6.2.** Մասնագիտական և գիտական տեղեկատվությունը հավաքելու, վերլուծելու և մշակելու ժամանակակից մեթոդներն օգտագործելու կարողություն:
- 6.3.** Հետազոտության թեմային վերաբերող նյութերը հաշվետվությունների, տպագրությունների, զեկուցումների ձևով շարադրելու կարողություն:

## **7. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ**

### **7.1. Պրակտիկայի արդյունքներով մագիստրանտն ամբիոն է ներկայացնում.**

- մագիստրոսական թեզի թեմային վերաբերող գրականության վերլուծությունը,
- փորձարարական աշխատանքների տվյալների վերլուծությանը և ամփոփմամբ հաշվետվությունը:

### **7.2. Ղեկավարի կողմից ստորագրված պրակտիկայի հաշվետվությունը ներկայացվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարին:**

## **8. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

### **8.1. Պրակտիկայի անցկացման ղեկավարությունն ու վերահսկո-**

ղությունն իրականացվում է ռեկտորի հրամանով նշանակված համապատասխան ամբիոնների մասնագետների կողմից:

**8.2.** Պրակտիկայի ղեկավարը մեթոդական օգնություն է տրամադրում մագիստրանտին՝ կատարվող հետազոտության հետ կապված խնդիրների լուծման գործում:

**8.3. Պրակտիկայի ղեկավարը՝**

- համաձայնեցնում է պրակտիկայի թեման, ծրագիրը մագիստրոսական ծրագրի ղեկավարի հետ,
- կատարում է անհրաժեշտ կազմակերպչական աշխատանք՝ պրակտիկայի ծրագրի կատարման ուղղությամբ,
- որոշում է կատարվող հետազոտության փուլերի հաջորդականությունը, պրակտիկայի անցկացման գրաֆիկը, մագիստրանտի աշխատանքային ռեժիմը,
- համակարգված վերահսկում է պրակտիկայի ընթացքը և մագիստրանտների աշխատանքը,
- օգնում է մագիստրանտներին՝ պրակտիկայի անցկացման և հաշվետվության ձևակերպման հետ կապված բոլոր հարցերում:

**8.4. Ղեկավարը՝**

- իրականացնում է պրակտիկայի խնդրի ձևակերպումը՝ մագիստրանտներին տրամադրելով անհատական առաջադրանքներ մագիստրոսական թեզի համար անհրաժեշտ նյութերի հավաքման համար, տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվական օգնություն,
- տալիս է հանձնարարականներ՝ գրականության ուսումնասի-

րման և հետազոտության մեթոդների կիրառման ուղղությամբ:

#### **8.5. Պրակտիկայի անցկացման ընթացքում մագիստրանտը՝**

- ստանում է ղեկավարից պրակտիկայի կազմակերպման և անցկացման հետ կապված հանձնարարականներ, բացատրություններ և առաջարկներ, ներկայացնում իր կատարած աշխատանքի հաշվետվությունը՝ պրակտիկայի անցկացման գրաֆիկին համաձայն,
- կատարում է հետազոտություններ թեզի թեմայով՝ համաձայն պրակտիկայի ծրագրի և գրաֆիկի,
- կազմում է հաշվետվություն կատարած աշխատանքի արդյունքների ամփոփմամբ, ըստ սույն Կարգի:

### **9. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ**

- 9.1** Ատեստավորումը պրակտիկայի արդյունքներով իրականացվում է պրակտիկայի հաշվետվության արդյունքների և պրակտիկայի ղեկավարությունն իրականացնող դասախոսի գրավոր կարծիքի հիման վրա (**Հավելված 3, Հավելված 4**): Ատեստավորումը կատարվում է ստուգարքի ձևով (ստուգված/չստուգված) և հաշվի է առնվում մագիստրանտների միջանկյալ (կիսամյակային) ատեստավորման ժամանակ:
- 9.2** Պրակտիկայի պաշտպանությունից «չստուգված», կամ անհարգելի պատճառով պրակտիկայից բացակայած մագիստրանտն ազատվում է Ակադեմիայից:

**9.3** Հարգելի պատճառով պրակտիկայից բացակայած մագիստրանտը պարտավոր է պրակտիկան անցնել դասերից դուրս՝ ազատ ժամանակ:

**Հավելված 1.**

**ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**

---

*/Ազգանուն, անուն, հայրանուն/*

---

---

*/Մասնագիտությունը/*

---

Հ/Հ	Պրակտիկայի անցկացման ենթաբաժինը, աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետները	Նշում կատարման մասին
1.			
2.			
3.			
4.			

**Մագիստրոսական ծրագրի ղեկավար՝**

\_\_\_\_\_ */Ստորագրություն/*

**Մագիստրանտ՝**

\_\_\_\_\_ */Ստորագրություն/*

**Հավելված 2.**

**ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՐԱՖԻԿ**

<i>Ամիս, ամսա- թիվ</i>	<i>Կատարված աշխատանքի հակիրճ բովանդակությունը</i>	<i>Աշխատանքի արդյունքը</i>	<i>Պրակտիկայի անցկացման վայրի պատասխա- նատուի ստորագրու- թյունը</i>

**Մագիստրոսական ծրագրի ղեկավար՝**

\_\_\_\_\_  
*/Ստորագրություն/*

**Մագիստրանտ՝**

\_\_\_\_\_  
*/Ստորագրություն/*



**Հավելված 3.**

**ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ**



**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ**

**ՖԱԿՈՒԼՏԵՏ՝** \_\_\_\_\_

**ԱՄԲԻՈՆ՝** \_\_\_\_\_

*/Պրակտիկայի անցկացման վայրի անվանումը/*

**Մագիստրանտ՝** \_\_\_\_\_

*/Անուն, ազգանուն/*

**Կուրս՝** \_\_\_\_\_

**Մագիստրոսական**

**ծրագրի ղեկավար՝** \_\_\_\_\_ «    »    20 թ. \_\_\_\_\_  
*/Ստորագրություն/* */ԱԱՀ/*

**Ամբիոնի կողմից նշանակված**

**պրակտիկայի ղեկավար՝** \_\_\_\_\_ «    »    20 թ. \_\_\_\_\_  
*/Ստորագրություն/* */ԱԱՀ/*

**ԵՐԵՎԱՆ - 2020**

**ԿԱՐԾԻՔ**

**ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ**

**ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

\_\_\_\_\_մինչև\_\_\_\_\_ժամանակահատվածը

\_\_\_\_\_  
*/Մագիստրանտի ԱԱՀ/*

անցկացրել է պրակտիկան \_\_\_\_\_  
*(Կազմակերպության, բաժնի անվանումը)*

Պրակտիկայի անցկացման ընթացքում \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
*/Մագիստրանտի ԱԱՀ/*

ուսումնասիրել է հետևյալ հարցերը.

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Պրակտիկայի անցկացման ընթացքում մագիստրանտն իրեն դրսևորել է (տրվում է տվյալ մագիստրանտի՝ պրակտիկայի ընթացքում դրսևորած գիտելիքների, կարողությունների, ունակությունների գնահատումը.

Պրակտիկայի ղեկավարի ստորագրություն՝ \_\_\_\_\_

Մագիստրանտի ստորագրություն՝ \_\_\_\_\_

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ.....	3
2. Պրակտիկայի նպատակներն ու հիմնական խնդիրները...	4
3. Պրակտիկայի անցկացման տեղը և ժամկետները.....	6
4. Պրակտիկայի բովանդակությունը.....	8
5. Մագիստրանտի գործունեությունը պրակտիկայի անցկացման վայրում.....	9
6. Մասնագիտական պրակտիկայից սպասվելիք արդյունքները.....	11
7. Պրակտիկայի արդյունքներով ներկայացվող Նյութերը.....	11
8. Պրակտիկայի անցկացման վերահսկողությունը.....	12
9. Պրակտիկայի արդյունքների ամփոփումը.....	13
10. <u>Հավելված 1.</u> Պրակտիկայի աշխատանքային պլան.....	15
11. <u>Հավելված 2.</u> Պրակտիկայի անցկացման գրաֆիկ.....	16
12. <u>Հավելված 3.</u> Հաշվետվություն պրակտիկայի.....	17
13. <u>Հավելված 4.</u> Պրակտիկայի անցկացման վայրի կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարի կարծիք.....	18

